Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ, Դ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1988, 300 էջ։

Մեր երկրի բանվոր դասակարգի ազգային ջոկատների հերոսական անցյալի գիտական, համակողմանի ուսումնասիրությունն այսօր էլ այժմեական է։ Այս իմաստով Ա. Համբարյանի, Դ. Մուրադյանի, Ա. Սիմոնյանի վերջերս լույս տեսած մենագրությունը մերօրյա խնդիրների առումով լուրջ ներդրում է սովետահայ պատմագիտության մեջ։

Գրախոսվող գիրքն Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի պատմության հարցերին նվիրված պատմագիտական հետազոտությունների պարզ ամբողջացումն ու ընդհանրացումը չէ։ Ըստ էության, այն նոր հետազոտություն է, որակապես նոր աշխատանք, որտեղ նկատի են առնվել պատմագիտության ժամանակակից նվաճումները, գիտական շրջանառության մեջ են դրվել արխիվային նորահայտ նյութեր, որոնք մենագրության հեղինակներին հնարավորություն են տվել խորությամբ լուսաբանելու, ճշտելու, մի շարք դեպքերում վերագնահատելու առանձին իրադարձություններ, փաստեր ու անելու նոր ընդհանրացումներ։

Հեղինակները հանգամանորեն անդրադառնալով Արևելյան Հայաստանի պրոլետարիատի ձևավորման սոցիալ-տնտեսական պայմանների խնդրին՝ համոզիչ փաստերով ցույց են տվել առաջադիմական այն մեծ նշանակությունը, որ ունեցավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։

Ուշադրության արժանի է այն, որ աշխատության մեջ հանգամանորեն լուսաբանվել են Արևելյան Հայաստանի արդյունաբերության ստեղծման և զարգացման հարցերը, ճշգրտվել, ամբողջացվել, գիտական իմաստավորում են ստացել հայտնի և անհայտ տվյալները, մասնավորապես ներկայացվել են Արևելյան Հայաստանի արդյունաբերական արտադրանքի ծավալը, նրա զարգացման դինամիկան, կապիտալիզմի զարգացմանը նպաստող և խանգարող գործոններն արտադրության գրեթե բոլոր ճյուղերում՝ սկսած լեռնահանքային արդյունաբերությունից, վերջացրած բազմաճյուղ տնայնագործական ձեռնարկություններով։ Գրքում բացահայտվել են տրնտեսության մեջ տեղի ունեցած դրական տեղաշարժերը։ Ցույց է տրվել, որ Արևելյան Հայաստանը լինելով համառուսաստանյան տնտեսական օրգանիզմի անբաժան մասը, բնականաբար, կրել է ռուսական կապիտալիզմի թե՛ դրական և թե բացասական ազդեցությունը։ Փաստական նյութի հիման վրա ընդգծվել է, որ եվրոպական կապիտալը ներթափանցելով Ռուսաստան, Անդրկովկաս և Արևելյան Հայաստան՝ մի կողմից մեծացնում էր տնտեսական կախվածությունն Արևմուտքից, մյուս կողմից՝ էապես նպաստում երկրամասում արդյունաբերության զարգացմանը։

Աշխատության մեջ անհրաժեշտ ուշադրություն է դարձվել արևելահայ արդյունաբերական բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման առանձնահատկություններին, որոնք պայմանավորված էին գերազանցապես հայ ժողովրդի պատմական ճակատագրով։ «Հալածվելով օտար նվաճողների կողմից, հայերը ստիպված թողել են իրենց հայրենիքը և հաստատվել տարբեր երկրներում, այդ թվում նաև Վրաստանում ու Ադրբեջանում». 1897 թ. մարդահամարի տվյալներով Անդրկովկասի հայերի շուրջ կեսը բնակվում էր այդ երկրներում (էջ 44)։ Գրքում հանգամանորեն վերլուծված են նաև մյուս առանձնահատկությունները՝ գյուղացիության երկրագործական և ոչ երկրագործական արտագնացությունը, մշակվող հողային ֆոնդի սակավությունը, տեղական արդյունաբերության թույլ զարգացումը, արդյունաբերական խոշոր կենտրոնների՝ Թբիլիսիի և Բաքվի, մոտիկությունը բանվորական ընտանիքի՝ որպես պրոլետարիատի շարքերը համալրող գործոնի, շափազանց աննշան դերը, «հողաբաժնով բանվորների» մեծ թվի առկայությունը և այլն։

Աշխատության մեջ հանգամանորեն ներկայացվել է Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի, մասնավորապես երկրամասի կապիտալիստական արդյունաբերության հիմքը կազմող պղնձարդյունաբերական պրոլետարիատի դրությունը։ Հեղինակային կոլեկտիվի ուշադրության կենտրոնում են եղել կադրային ու ժամանակավոր բանվորների, կանանց և անչափահասների աշխատանքի շահագործման, բանվորական աշխատանքային օրվա տևողության, աշխա-

տավարձի, բանվորների հարաբերական և բացարձակ աղքատացման հարցերը։ Գրքում լուսաբանված են բանվորների աշխատավարձի վրա հեղափոխական շարժումների վերելքի ու տեղատվությունների ունեցած ազդեցությունը, ինչպես նաև անվանական և իրական աշխատավարձի հարաբերության հարցերը, բանվորական ընտանիքի բյուջեն։ Առաջին անգամ բոլոր ամենայնի լուսաբանվել են զարգացող արդյունաբերության մեջ կանանց ու անչափահասների աշխատանքի սահմանափակ կիրառման պատճառները, ինչը բնորոշ էր ինչպես ամբողջ Անդրկովկասին, այնպես էլ Արևելյան Հայաստանին (էջ 66—75)։

Մինչ այժմ Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի պատմության ամենատարբեր խնդիրներին նվիրված հարուստ դրականության մեջ մասնագիտական հետազոտության չեն ենթարկվել բանվորների աշխատանքային պայմանների և դրա հետ կապված դժբախտ պատահարների ու սոցիալական ապահովագրության հարցերը։ Ենդրո առարկա հետազոտությունը լրացնում է այդ բացը։ Այսուհանդերձ, գրքում մինչև վերջ չեն հաղթահարվել նաև այս հարցում եղած դժվարությունները, քանի որ, ինչպես իրավացիորեն նկատում են հեղինակները, արտադրության մեջ տեղի ունեցող դժբախտ պատահարներին վերաբերող նախահեղափոխական շրջանի վիճակագրական նյութերն ունեն խոշոր թերություններ. «ամենացայտուն թերությունն այն է, որ ոչ բոլոր դժբախտ պատահարներն էին հաշվառվում» (էջ 95)։ Գրքում հիմնականում քննվել են արդյունահանող արդյունաբերության մեջ տեղի ունեցող դժբախտ պատահարների հարցերը։ Հաշողվել է կենդանի, փաստական նյութերով ցույց տալ կայսրության կիսագաղութային ազգային շրջաններից մեկի՝ Արևելյան Հայաստանի, բանվոր դասակարգի ծայրահեղ ծանր վիճակը, որը նրան անխուսափելիորեն մղում էր հեղափոխական պայքարի հորձանուտը, դարձնում ռուսական պրոլետարիատի հեղափոխական շոկատներից մեկը, պայմաններ ստեղծում հեղափոխական մարքսիստական սոցիալ-դեմոկրատիայի ակտիվ գործունեության համար։

Աշխատության մեջ այնուհետև ցույց է տրվում գյուղական պրոլետարիատի ձևավորումն ու զարգացումը։ Նշվում է, որ նրա առաջին ներկայացուցիչները թեև երևան են եկել դեռ անցյալում, բայց պարսկական ու թուրքական ծանր տիրապետության պայմաններում պրոլետարիատի համար զարգացման պայմաններ չկային։ Միայն Ռուսաստանին միացումից հետո են Արևելյան Հայաստանում առաջանում պրոլետարական տարրերը, որոնք զարգացման որոշակի աստիճանի են հասնում XIX դ. վերջին և XX դ. սկզբին։ Փաստական տվյալներով ցույց է տրվում, որ 1880-ական թվականների կեսին պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածներն արդեն կազմում էին երկրի գյուղական բնակչության շուրջ 30%-ը։ Հետագա տասնամյակներում նրանց քանակը գնալով ավելի է մեծանում։ Շեշտվում է, որ Արևելյան Հայաստանում պրոլետարիատի տիպիկ ներկայացուցիչը բատրակն էր՝ իր շնչին բաժնեհողով ու տնտեսությամբ։ Աշխատության մեջ ցույց է տրվում, որ բատրակները վարձվում էին տարբեր ժամկետներով, բայց առավելապես սեզոններով, քիչ էր տարիներով վարձվողների քանակը։ Ապացուցվում է, որ Արևելյան Հայաստանի գյուղական պրոլետարների ու կիսապրոլետարների ճնշող մեծամասնությունը տեղացիներ էին և միայն փոքրամասնությունն էր եկել դրսից՝ գերազանցապես Պարսկաստանից ու Թուրքիայից։ Բատրակները վարձվում էին առավելապես Արարատյան դաշտում ու Լոռիում, այսինքն այն շրջաններում, ուր ապրանքադրամական հարաբերությունները համեմատաբար զարգացած էին։

Գրքում այնուհետև համառոտակի ցույց է տրվում գյուղական պրոլետարիատի պայքարն իր հարստահարողների ու ճնշողների դեմ։ Նշվում է, որ բատրակներն այդ պայքարը մղում էին աշխատավոր գյուղացիության մյուս զանգվածների հետ միասին, քանի որ ցրված էին առանձին գյուղերում ու տնտեսություններում և դեռ հավաքական ուժ չէին կազմում։ Մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ, եթե գյուղական պրոլետարիատի ձևավորման, դասակարգային պայքարի, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի՝ գյուղում ծավալած գործունեության, գյուղացիական հեղափոխական շարժումների, այդ գործում գյուղական պրոլետարիատի ավանգարդային դերի հարցերը լուսաբանվեին արդյունաբերական պրոլետարիատի պատմության խնդիրների հետ զուգակցված, քանի որ դրանք սերտորեն կապված են միմյանց հետ և, բնականաբար, ընթերցողի մեջ ամբողջական պատկերացում կստեղծեին հարցի մասին։ Աշխատությունը կշահեր, եթե հեղինակներն Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման, բանվոր դասակարգի և գյուղացիության վիճակը վերլուծելիս առանձին դեպքերում խուսափեին երկրորդական բնույթի թվական տվյալներից ու փաստերից։ Դա կնպաստեր էական ընդհանրացումների ու եզրահանգումների ընդգծմանը։

Հետաքրքիր նյութ է պարունակում «Բանվորական շարժումները և հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները Հայաստանում XIX դ. վերջին և XX դ. սկզբին» բաժինը։ Հեղինակների տեսադաշտից չեն վրիպել աղահանքերում, տպարաններում, երկաթուղու շինարարությունում զբաղված բանվորների առաջին հեղափոխական ելույթները, որոնք, չնայած դարավերջին թույլ էին և կրում էին տնտեսական բնույթ, այդուհանդերձ, վկայում էին ձևավորվող դասակարգի հեղափոխական ընդվզումների ստիճանական հասունացման մասին։ Գրքում համակողմանիորեն լուսաբանված են XX դ. սկզբին Արևելյան Հայաստանում ծավալված գործադուլային շարժումների հարցերը, հիմնավորված է այն հետևությունը, որ «Ալավերդում բանվորական հոծ մասսայի և ուժեղ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության առկայությունը պայմանավորում էին նրանց առաջատար դերը Հայաստանի հեղափոխական շարժումների մեջ» (էջ 182)։ Ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այլ ընդհանրացումներ, փաստերի, իրադարձությունների գիտական վերլուծություններն ընդգծում են աշխատության պատմաուսակցական ուղղվածությունը, որն օգնում է մասսաների նկատմամբ կուսակցական ներգործության մեխանիզմի բացահայտմանը։

Գրքում անհրաժեշտ ուշադրություն է նվիրվել բանվորական շարժումների և գյուղացիական ելույթների զուգակցման հարցին։ Նշելով Արևելյան Հայաստանում այդ երևույթի առկայության փաստեր, հեղինակներն իրավացիորեն նկատում են, որ նման երևույթը հնարավոր էր դառնում Արևելյան Հայաստանի այն շրջաններում, «ուր ուժեղ էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը քաղաքային և գյուղական պրոլետարիատի վրա։ Այդպիսի վայրերից էր Լոռին» (էջ 195)։

Աշխատության մեջ ընդգծված է բոլշևիկների ազդեցության մեծացումը, որն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Արևելյան Հայաստանում չէր բացառում սուր, անհաշտ պայքարը բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների դեմ։ Սակայն եթե դաշնակցական կուսակցության դեմ մղած պայքարը ցույց է տրված կոնկրետ օրինակներով (էջ 185, 209, 210, 216, 222), ապա նույնը չի կարելի ասել մյուս մանրբուրժուական կուսակցությունների դեմ բոլշևիկների մղած պայքարի լուսաբանման վերաբերյալ։ Գրքում ցույց է տրված, որ հեղափոխական պրոպագանդի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բոլշևիկյան կազմակերպությունները հմտորեն օգտագործում էին գաղափարական աշխատանքի հնարավոր բոլոր միջոցները՝ մամուլը, միտինգները, ժողովները, հրապարակային դասախոսությունները, ցույցերը։ Բոլշևիկները մեծ նշանակություն էին տալիս ճշմարիտ ինֆորմացիային, դժվարությունների, վրրիպումների ու բացթողումների հրապարակմանը, կարծիքների բախմանը, բանվորական շարժման ընթացքում թույլ տրված սխալների բացահայտմանը։

«Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն» գիրքը գրված է բավականաչափ լայն աղբյուրագիտական բազայի վրա, պարունակում է հարուստ, զգալի չափով նոր փաստական նյութ, աչքի է ընկնում բովանդակության և շարադրման ոճի միասնությամբ։

Պ. Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու